Հայ գրականության մարզային օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությունը՝ 120 րոպե)

9-րդ դասարան

1.Մեսրոպ Մաշտոցի սխրանքը. նրա գործի պատմաքաղաքական դերը հայ ժողովրդի հարատևման հոլովույթում: Հայ մեծերի անդրադարձը Մաշտոցի կերպարին (գրել բնագրային հատվածներ և նշել հեղինակներին): 4 միավոր

2. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման ժամանակաշրջանը: Ո՞ւմ պատվերով է գրվել «Պատմությունը»: Մեկնաբանել «Վահագնի ծնունդը» առասպելը՝ օգտագործելով բնագրային հղումներ: Բացատրել առասպելի և վիպերգի տարբերությունը նշել մի քանի վիպերգեր: 4 միավոր

3. Ո՞վ է «Սասնա ծռեր» էպոսի ստեղծողը. պատմական ի՞նչ իրողության արձագանքն է դյուցազներգությունը: Նշի՛ր այլ ժողովուրդների էպոսներ և համեմատի՛ր որևէ մեկի հետ կամ ընդգծի՛ր որևէ ընդհանրություն:
Գրի՛ր հայ մեծերից որևէ մեկի գնահատականը մեր էպոսի մասին: 6 միավոր

4. Մեկնաբանի՛ր՝ ո՞ւմ է խորհրդանշում հետևյալ պատկերը Նարեկացու«Մեղեդի ծննդյան» տաղում:

Լուսափայլ էր ծոցը՝ կարմիր վարդով լցված,
Դաստակները՝ծիրանագույն, մանուշակի գեղեցիկ փունջ: 3 միավոր

5. Սայաթ-Նովան սիրո և արդարության երգիչ: Ո՞վ է մեծ սիրերգակի անմրցելի սերը: Ո՞վ է ներքոգրյալ երկտողի հեղինակը: Մեկնաբանի՛ր երկտողի 2-րդ տողը: 3 միավոր

Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու

Քեզ միայն քո յարն է վառել, քանի՜ յարեր վառել ես դու:

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ Ս. Աբազյան